ՋԵՐՄՈՒԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ
ՓԱԿ ԲԱՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հայաստան, ք. Երևան, Արշակունյաց 77/3, հեռ. +374 11 589836, էլ. փոստ info@jermukgroup.am, www.jermukgroup.am

119/23 / 07.03.2022թ.

HETQ.am-ի լրագրող Տիրայր Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր 01.03.2023թ. հարցման՝ հատնում ենք, որ Ձեր բնորոշմամբ *«հարցման մեջ հիշատակված կոնկրետ գործարքին չառնչվող, ընդհանրական տվյալներով հագեցած պատասխան»*-ի նպատակը կառուցապատման ոլորտում գնագոյացման և վաճառքի ընթացակարգերը ներկայացնելն էր, ինչն էլ ուղղակիորեն առնչվում է հիշատակված կոնկրետ գործարքին այնքանով, որքանով այդ գործարքը ևս կնքվել է ընդհանուր, բոլորի համար նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

Անդրադառնալով ամրագրումը հավաստող փաստաթղթերի տրամադրմանը՝ հայտնում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրման որևէ կարգ սահմանված չէ, ամրագրումն իրականացվել է կառուցապատող «Ջերմուկ գրուպ» ՓԲ ընկերության ներքին շրջանառության փաստաթղթերով:

Բնակարանի նախապես ամրագրումը հավանական գնորդի համար առաջացնում է ոչ թե պատասխանատվություն, այլ հնարավորություն ձեռք բերել բնակարան ավելի մատչելի գնով, քան այն կարժենա կառուցապատման ավարտական փուլերում, իսկ

հավանական գնորդի կողմից բնակարանը չգնելը կառուցապատողի ռիսկն է, ինչն էլ ցանկացած ձեռնարկատիրական գործունեության պարտադիր բաղադրիչ է հանդիսանում:

Տարբեր ժամանակներում «Բյուրեղ» բնակելի թաղամասում բնակարանների 1քմ արժեքի տարբերակման չափանիշները մանրամասն նկարագրված են մեր նախորդ պատասխանում, ինչն էլ խնդրում ենք հիմք ընդունել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Ձեր կողմից նախորդ հարցմանը կից ներկայացված Գնորդի պատասխանը լիազորում է մեզ մասնավորապես տրամադրել հիշատակված բնակարանի շուկայական գնի վերաբերյալ առավել հստակ տեղեկատվություն, ինչը առավել քան մանրամասն ու համապարփակ ներկայացվել է Ձեզ «Ջերմուկ գրուպ» ՓԲ ընկերության 01.03.2023թ. գրությամբ:

Հարգանքով՝

«Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն Վ. Պողոսյան